



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ  
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

13 հուլիսի 2021 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1 Ա

### ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 47 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Սարգսյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, Երևանի քաղաքապետի խորհրդականները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատարը, քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի պաշտոնակատար Տ. Սարգսյանը, քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետի պաշտոնակատար Ռ.Գյոզալյանը, քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գ. Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Սարգսյանը ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասով՝ տեղեկացրեց.

- ԻՄ ՔԱՅԼԸ կուսակցությունների դաշինքի Երևան քաղաքի ընտրական ցուցակով ընտրված Երևան քաղաքի ավագանու անդամ Սուրեն Օհանյանը դիմում է ներկայացրել ավագանու անդամի լիազորությունները դադարեցնելու մասին:

- Համաձայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի հուլիսի 8-ի հ.35 արձանագրության՝ Երևանի ավագանու Իմ Քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամ՝ Սուրեն Օհանյանի մանդատը տրվել է Իմ Քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Դիանա Քերոբյանին:

- Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սաթենիկ Մկրտչյանը դիմում է ներկայացրել մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունները դադարեցնելու մասին:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Սարգսյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2021 թվականի հուլիսի 13-ի արտահերթ նիստի օրակարգը և ընթացակարգը, որի համար հիմք է հանդիսանում «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 30-րդ հոդվածը.

- 1) Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N310-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին:

- 2) Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N315-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

- 3) Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

- 4) Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

5) Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

6) Երևան համայնքի սեփականություն համարվող Արշակունյաց պողոտա հ.54/2 շենքի հ.42 բնակարանն անհատույց օտարելու մասին:

7) Երևան համայնքի սեփականություն համարվող Եղ. Թադևոսյան փողոցի հ.3 շենքի հ.8 բնակարանն անհատույց օտարելու մասին:

8) Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N315-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին:

9) Երևանի ավագանու 2021 թվականի հունիսի 22-ի N404-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Մարգարյանն անհրաժեշտությունից ելնելով առաջարկեց օրակարգում ընդգրկված 1-ին հարցը՝ «Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N310-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին» ավագանու որոշման նախագիծը քննարկել որպես օրակարգի 8-րդ հարց, իսկ օրակարգի 8-րդ հարցը՝ «Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N315-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ավագանու որոշման նախագիծը քննարկել որպես օրակարգի 1-ին հարց:

1. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N315-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի պաշտոնակատար Տարոն Մարգարյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ**- Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 5 անդամ.

1. Միքայել Մանրիկյան - Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

2. Մարկոս Հարությունյան - Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

Նիստը ժամը 11.41-ից վարում էր Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

3. Արման Բաբաջանյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Արմեն Գալջյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության քարտուղար

5. Լևոն Զաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի պաշտոնակատար Տարոն Մարգարյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Լիլիթ Կիրակոսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N315-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** – Ելույթների համար գրանցվել են ավագանու 6 անդամ.

1. Դավիթ Խաժակյան - Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

2. Թեհմինա Վարդանյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

3. Գրիգորի Երիցյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

5. Միքայել Մանրիկյան - Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

6. Լիլիթ Կիրակոսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

«Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N315-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի պաշտոնակատար Տ. Մարգարյանը:

**ՈՐՈՇՎԵՑ – 1.** Երևան քաղաքի ավագանու **2020** թվականի դեկտեմբեր **23**-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման **2021** թվականի ծրագրի վերաբերյալ» **N315**-Ն որոշման (այսուհետև՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) 2-րդ կետի 3-րդ ենթակետը ճանաչել ուժը կորցրած:

2) 2-րդ կետը լրացնել նոր **8**-րդ ենթակետով.

«**8**) Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասում կառուցված ինքնակամ կառույցն անկախ ավարտվածության աստիճանից և օրինականացման ենթակա լինել կամ չլինելու հանգամանքից կարող է քանդվել Երևանի քաղաքապետի որոշմամբ:»

3) հավելվածի **28**-րդ կետում «, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության **2006** թվականի մայիսի **18**-ի **N 912**-Ն որոշմամբ հաստատված կարգի **37**-րդ կետով նախատեսված դեպքում ինքնակամ կառույցի հրապարակային սակարկություններով օտարման կամ օգտագործման տրամադրելու կարգերը,» բառերը փոխարինել «կարգը» բառով:

4) հավելվածի **30**-րդ կետից հանել «, իսկ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա ինքնակամ կառուցված և համայնքի ղեկավարի որոշման հիման վրա օրինական ճանաչված ավտոտնակների դեպքում՝ շինության կադաստրային արժեքի **0,2** տոկոսի չափով» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

3. Օրինական ճանաչված ինքնակամ շինությունների և դրանցով ծանրաբեռնված հողամասերի տնօրինումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության **2006** թվականի մայիսի **18**-ի **N 912**-Ն որոշմամբ սահմանված կարգով միայն այն դեպքում, եթե ինքնակամ շինությունը ճանաչվել է օրինական մինչև **2021** թվականի հունվարի **31**-ը ներկայացված դիմումի հիման վրա:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **42** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **39**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **2**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**2. ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու **2020** թվականի դեկտեմբերի **23**-ի **N315**-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ**- Ձեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

1. Տիգրան Գալստյան - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու **2020** թվականի դեկտեմբերի **23**-ի **N315**-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ** – Երևան քաղաքի ավագանու **2020** թվականի դեկտեմբերի **23**-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման **2021** թվականի ծրագրի վերաբերյալ» **N315**-Ն որոշմամբ հաստատված հավելվածի **25**-րդ, **32**-րդ և **33**-րդ կետի 3-րդ ենթակետից հանել «(կամ)» բառը, իսկ **26**-րդ կետի 1-ին ենթակետում նշված «5 տոկոսի չափով» բառերը փոխարինել «50 տոկոսի չափով» բառերով:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **35** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **33**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **2**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**3. ԼՍԵՑԻՆ** - Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ**- Ձեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

**1.** Լևոն Զաքարյան - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Լիլիթ Կիրակոսյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** – Ելույթի համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

**1.** Լիլիթ Կիրակոսյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Ելույթի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Ն. Սարոբյանը և քաղաքապետի տեղակալ Գայանե Մելքոմ Մելքոմյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – **1.** Երևան քաղաքի Աջափնյակ Գ-1 թաղամասի **h.5/1, 5/2, 5/6, 1/45, 3/5** և **և Ն. Շիրազի փողոց h.49** հասցեներում գտնվող «ՊՐՈՖ ԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող **4000.0**քմ, **4990**քմ, **1760.0**քմ, **967.81**քմ, **1000.0**քմ և **1739.16**քմ մակերեսներով հողամասերի նպատակային նշանակությունները «բնակավայրերի» հողերի կատեգորիայից փոխադրել «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների» կատեգորիայի հողերի գործառնական նշանակություններով:

**2.** Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման **1**-ին կետով հողամասերի նպատակային նշանակությունների կատարված փոփոխությունների մասին **10**-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **43** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **35**, դեմ՝ **2**, ձեռնպահ՝ **6**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**4. ԼՍԵՑԻՆ** - Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ**- Ձեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

**1.** Տիգրան Գալստյան - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետի խորհրդական Դ.Ճգնավորյանը և քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գ. Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Լիլիթ Կիրակոսյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** – Ելույթի համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

**1.** Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

**ՈՐՈՇՎԵՑ** – **1.** Երևան քաղաքի Գ. Չոփրապի փողոցի **h.120/1, h.120/2, h.120/3, h.120/4, h.120/5, h.120/6, h.120/7, h.120/8, h.120/9** և **h.120/10** հասցեներում գտնվող Հայաստանի Հանրապետությանը սեփականության և ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասերի նպատակային նշանակությունները արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ

արտադրական նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա:

**2.** Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման **1-ին** կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին **10-օրյա** ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **39** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **33**, դեմ՝ **1**, ձեռնպահ՝ **5**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության քարտուղար Արմեն Գալջյանը առաջարկեց հաշվի առնելով, որ ժամը **13:00-14:00**-ը հայտարարվում է ընդմիջում, Երևանի ավագանու **13.07.2021թ.** արտահերթ նիստի աշխատանքները շարունակել և ընդմիջում չհայտարարել:

Առաջարկն ընդունվեց:

**5. ԼՍԵՑԻՆ** - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ**- Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

**1.** Արման Բաբաջանյան - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գ. Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Լիլիթ Կիրակոսյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ** – **1.** Երևան քաղաքի Թբիլիսյան խճուղուն հարող տարածքում գտնվող **150.53**քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողերի կատեգորիայից փոխադրել Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա:

**2.** Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման **1-ին** կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին **10-օրյա** ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **39** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **33**, դեմ՝ **1**, ձեռնպահ՝ **5**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**6. ԼՍԵՑԻՆ** - Երևան համայնքի սեփականություն համարվող Արշակունյաց պողոտա **h.54/2** շենքի **h.42** բնակարանն անհատույց օտարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ**- Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան համայնքի սեփականություն համարվող Արշակունյաց պողոտա **h.54/2** շենքի **h.42** բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Արշակունյաց պողոտա հ.54/2 շենքի հ.42՝ 55.92քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.06022017-01-0099 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Լիլիթ, Գևորգ և Գոռ Խաչատրյաններին:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 33 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 30, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**7. ԼՍԵՑԻՆ** - Երևան համայնքի սեփականություն համարվող Եդ. Թադևոսյան փողոցի հ.3 շենքի հ.8 բնակարանն անհատույց օտարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ**- Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գ. Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան համայնքի սեփականություն համարվող Եդ. Թադևոսյան փողոցի հ.3 շենքի հ.8 բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն համարվող Եդ. Թադևոսյան փողոցի հ.3 շենքի հ.8՝ 57.84քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.17112015-01-0103 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Սոֆյա Ազոյանին, Նաիրա Մուսինյանին և անչափահաս Գագիկ Մուսինյանին, ում անունից հանդես է գալիս մայրը՝ Սոֆյա Ազոյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 36 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 35, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**8. ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N310-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ**- Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N310-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** – Ելույթների համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Արման Անտոնյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Լուսինե Գևորգյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3.Սաթենիկ Սկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի մասին» N310-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացնել 11,622.5

հազար դրամ՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ կապիտալ դրամաշնորհներ համայնքներին» հոդվածով:

2. Որոշման NN 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-3 հավելվածների:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 38 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 38, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

9. **ԼՍԵՑԻՆ** - Երևանի ավագանու 2021 թվականի հունիսի 22-ի N404-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ**- Ջեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Արմեն Գալջյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N310-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի հունիսի 22-ի «Երևանի Աշոտ Ղուլյանի անվան մանկապատանեկան մարզատեխնիկական կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» N404-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 36 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 33, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ**

**ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Հ. ՄԱՐԳՍՅԱՆ**